



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ОФИС ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 07/2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2021 թվականի հուլիսի 16-ից

ԳՅՈՒՏԵՐ.....	4, 94
<i>Տեղեկություններ տրված կարճաժամկետ արտոնագրերի մասին.....</i>	<i>6, 96</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ.....	15
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին.....</i>	<i>17</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին.....</i>	<i>86</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ.....	88
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	90

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-534 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики,
Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-534 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 94
Сведения о выданных краткосрочных патентах.....	6, 96
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	15
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....	17
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	86
УКАЗАТЕЛИ.....	88
СООБЩЕНИЯ.....	90
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	104

CONTENTS

INVENTIONS.....	4, 94
Information on granted short-term patents.....	6, 96
TRADE MARKS.....	15
Information on registered trade marks and service marks.....	17
Information on renewal of effect of trademark registration.....	86
INDEXES.....	88
REPORTS.....	90
TWO-LETTER CODES.....	104

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
Y գյուտի կարճաժամկետ արտոնագիր
B գյուտի արտոնագիր
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դաս ակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված կարճաժամկետ արտոնագրերի մասին

(51) 2021.01 (11) 609 (13) Y
A01J 25/00
(21) AM20200026Y (22) 03.03.2020
 (72) Սամվել Սմբատի Մանուկյան (AM)
 (73) Սամվել Սմբատի Մանուկյան, 3101, Գյումրի, Ֆուրմանովի փող. 2-րդ նրբ. 12ա (AM)
(54) Պանրի մամլակաղապար
 (57) Պանրի մամլակաղապարն ունի իրան, պանրահատիկի պարփակման ծակոտած բոլորակ, վերին և ստորին կափարիչներ և դրանց միակցված ստորին փոխագուցավոր և վերին օդային մխոցներ: Իրանը կազմված է վերին և ստորին մասերից, որոնց միջև՝ բացակում ռետինե ներդիրի միջոցով տեղակայված է բոլորակը: Այն ունի կտրվածք և կտրվածքի եզրերին ամրակցված, ռետինե ներդիր ունեցող վերջամասեր: Ստորին կափարիչը կազմված է մեծ և փոքր մասերից, որոնք համապատասխանաբար միակցված են ստորին փոխագուցավոր օդային մխոցի մեծ և փոքր մխոցակոթերին: Վերին կափարիչը կազմված է մեծ և փոքր մասերից: Փոքր մասի վրա տեղադրված է պանրահատիկի լցման ավտոմատ փական՝ կազմված բաժանարար կոնից, երեք բույթից և վերին կափարիչի մեծ մասերին միակցված զսպանակներից: Կափարիչների մեծ մասերին իրենց մեկ ծայրով ամրակցված են սեղմակներ, որոնց մյուս ծայրերը հենված են ուղղորդիչների մեջ տեղադրված զսպանակների վրա: Սեղմակների յուրաքանչյուր զույգի վրա տեղադրված է քայլային մեթոդով երկկողմանի մամլում իրականացնող մեխանիզմ՝ կազմված ատամնաքանոնից, սևեռող մատից և զսպանակից: Բոլորակի վերջամասերից մեկի վրա տեղադրված է ինդուկցիոն կոճ, իսկ մյուսի վրա՝ երկաթե ձող:

Ընդլայնվում են մամլակաղապարի ավտոմատացման հնարավորությունները, բարձրացվում է դրա աշխատանքի ճշտությունը, 5 նկ.:

(51) 2021.01 (11) 610 (13) Y
A61H 33/00
A61K 35/00
A61P 43/00
(21) AM20210023Y (22) 19.03.2021
 (72) Արմեն Մարտինի Գևորգյան (AM)
 (73) Արմեն Մարտինի Գևորգյան, 0054, Երևան, Դավթաշենի 2-րդ թաղ. 47, բն. 4 (AM)
(54) Մաշկի խորը մաքրման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է գեղարարությանը և ֆիզիոթերապիային, մասնավորապես՝ դեմքի և մարմնի մաշկի խորը մաքրման եղանակին և կարող է կիրառվել մաշկի երիտասարդացման, ավելորդ քաշի հեռացման, ցելյուլիտների վերացման, օրգանիզմից վնասակար նյութերի և շլակների հեռացման համար: Մաշկը ենթարկում են նախնական մաքրման, իրականացնում են շոգեհարում, ապա պիլինգ:

Պիլինգն իրականացնում են 2 փուլով. 1-ին փուլում իրականացնում են քիմիական պիլինգ՝ 50-85°C ջերմաստիճանում 30-45 րոպեի ընթացքում շոգեխցիկում շոգեհարմամբ՝ պացիենտի մարմնի վրա գոլորշային խառնուրդով ազդեցության միջոցով: Որպես գոլորշային խառնուրդ օգտագործում են ակտիվ նյութեր պարունակող գինու գոլորշի, որը ստացվել է խաղողի գինու գոլորշիների բուսական հավաքածուի կամ դեղաբույսերի հետ շփվելիս, 2-րդ փուլում իրականացնում են մեխանիկական պիլինգ՝ խյուսով, որը պարունակում է հետևյալ բաղադրամասերը, զանգված %.

ալկոհոլազերծված տաք գինի՝ 10.0-30.0, խաղողի կորիզի աղացվածք՝ 2.5-10.0, թարմ աղացած խաղող՝ 10.0-30.0, խաղողի կորիզի յուղ՝ 1.0-5.0 և տաք ջուր մինչև 1.0կգ:

Գյուտի կիրառումը թույլ է տալիս վերացնել մաշկի կոսմետիկական թերությունները և կանխարգելել տարիքային փոփոխությունները, ինչպես նաև բարձրացնել մաշկի խորը մաքրման աստիճանը:

(51) 2021.01 (11) 611 (13) Y
A61K 31/00

(21) AM20190149Y (22) 20.12.2019

(72) Անդրանիկ Քոչարյան (AM), Մառեկ Լուրա (AM)
(73) Անդրանիկ Քոչարյան, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM), Մառեկ Լուրա, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM)

(54) Օրգանիզմի թթվային բալանսը կարգավորող բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական բաղադրանյութին, մասնավորապես՝ օրգանիզմի թթվային բալանսը կարգավորող բաղադրակազմին, որը կարող է կիրառվել կանխարգելիչ և բուժական նպատակներով:

Բաղադրանյութը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգված%. նատրիումի բիկարբոնատ՝ 55.5-59.0, պեկտին՝ 6.5-7.5, նարնջի համային հավելում՝ 2.2-3.2, վիտամին C՝ 1.3-2.3, մեղրախոտի լուծամզվածք՝ 0.5-0.8, մագնեզիումի ցիտրատ՝ 7.5-8.5, կալիումի ցիտրատ՝ 11.5-12.5, ցինկի ցիտրատ՝ 0.6-0.8, դիոդոլի դիհիդրատ՝ 4.9-5.9:

Ապահովվում է բաղադրանյութի արդյունավետությունը:

(51) 2021.01 (11) 612 (13) Y
A61K 31/00

(21) AM20200002Y (22) 09.01.2020

(72) Անդրանիկ Քոչարյան (AM), Մառեկ Լուրա (AM)
(73) Անդրանիկ Քոչարյան, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM), Մառեկ Լուրա, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM)

(54) Օրգանիզմում երկաթի մակարդակը կարգավորող բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական բաղադրանյութին, մասնավորապես՝ օրգանիզմում երկաթի մակարդակը կարգավորող բաղադրակազմին, որը կարող է կիրառվել կանխարգելիչ և բուժական նպատակներով:

Օրգանիզմում երկաթի մակարդակը կարգավորող բաղադրանյութը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգված %.
երկաթի ֆումարատ՝ 5.5-6.5, ասկորբինաթթու՝ 16.3-17, պիրիդոքսին՝ 0.22-0.32, ֆոլաթթու՝

0.036-0.136, ցիանկոբալամին՝ 0.054-0.064, սիբիրյան ջինսենգի լուծամզվածք՝ 20.5-21.5, կորեական ջինսենգի լուծամզվածք՝ 16.3-17.3, բայկալի գանգի լուծամզվածք՝ 3.3-4.3, էխինացեայի արմատների լուծամզվածք՝ 3.3-4.3, ֆիլանտուս էմբլիկայի պտուղների լուծամզվածք՝ 15.2-16.2, դոմի սերմերի լուծամզվածք՝ 5.5-6.5, հնդկական սև պղպեղի լուծամզվածք՝ 1.03-1.08, մեթիլ սուլֆոնիլ մեթան՝ 5.5-6.5:

Ապահովվում է բաղադրանյութի արդյունավետությունը:

(51) 2021.01 (11) 613 (13) Y
A61K 31/00

(21) AM20200088Y (22) 02.10.2020

(72) Անդրանիկ Քոչարյան (AM), Մառեկ Լուրա (AM)
(73) Անդրանիկ Քոչարյան, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM), Մառեկ Լուրա, 2621, Շիրակի մարզ, Ոսկեհասկ, 6փ. /ՀՈՂ/ 5 (AM)

(54) Հակաբորբոքային բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական բաղադրանյութին, մասնավորապես հակաբորբոքային բաղադրակազմին:

Հակաբորբոքային բաղադրանյութը ներառում է հնդկական սև պղպեղի չոր լուծամզվածք: Լրացուցիչ ներառում է ասկորբինաթթու և տալկ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %

ասկորբինաթթու	99,0
հնդկական սև պղպեղի չոր լուծամզվածք	0,5
տալկ	0,5:

Ապահովվում է բաղադրանյութի արդյունավետությունը:

(51) 2021.01 (11) 614 (13) Y
A63B 31/00

(21) AM20200074Y (22) 25.08.2020

(72) Վարդան Մելոյան (AM)
(73) Վարդան Մելոյան, Երևան, Դավիթաշեն-2, 2.46, բն.12 (AM)

(54) Լողաթաթ բրաս ոճով լողալու համար

(57) Գյուտը վերաբերում է սպորտին, մասնավորապես՝ լողալու համար նախատեսված պիտույքներին, և կարող է օգտագործվել բրաս ոճով լողալու համար:

Լողաթաթ բրաս ոճով լողալու համար, որն ունի ներքան ունեցող կրկնակոշիկ և նրա հետ կապված թիակ, որն ուղղված է աշխատանքային մակերևույթով դեպի կրկնակոշիկի ներքին կողմը և պատրաստված է ճկուն, չսեղմվող մակերեսով մակերևույթ ունեցող նյութից: Թիակը ունի երկու զույգ համաչափ և իրենց հիմքերով միմյանց հետ հողակապերով կապված լողաթևեր, որոնք մեկը մյուսի նկատմամբ տեղադրված են անկյան տակ և կողմնային մասերում ունեն ուղղագիծ և կորագիծ ծայրային հատվածներ, որոնց երկրաչափական ձևերը նման են ձկների լողաթևերի ձևերին: Կրկնակոշիկին մոտ զույգ լողաթևերը միմյանց հետ կապված են երկու հիմնական զուգահեռ հողակապերով, հավաքված կրկնակոշիկի և լողաթևերի հիմքերի վրա աշխատանքային ընթացքի կողմից, շեղված կրկնակոշիկի առանցքից և անկյան տակ դրա հարթության նկատմամբ, և լողաթևերի մյուս զույգի հետ երկու լրացուցիչ հողակապերով, տեղակայված իրենց կողմնային մասերի հարակից ուղղագիծ հատվածների վրա նաև աշխատանքային ընթացքի կողմից, իսկ լողաթևերի երկրորդ զույգի հիմքերը կապող հողակապը տեղակայված է թիակի ազատ ընթացքի կողմից: Կրկնակոշիկն ունի ռետինե ամրակապ՝ իր դիմային մասի վրա, ներքանի տակ ամրակցված է հենահարթակ, որը փոխգործակցում է չորուկի հետ միացման ձողի միջոցով: Հիմնական հողակապերի առանցքների և կրկնակոշիկի երկայնական առանցքի կազմած անկյունը կրկնակոշիկի ներքանի հարթությունում շեղված է դեպի դուրս: Աջ լողաթաթի թիակի արտաքին զույգի աջակողմյան լողաթևի հարթության և կրկնակոշիկի ներքանի հարթության կազմած անկյունը շեղված է ներքանի հարթությունից: Արտաքին զույգի ձախակողմյան լողաթևի հարթության և կրկնակոշիկի ներքանի հարթության կազմած անկյունը շեղված է ներքանի հարթությունից՝ թիակի լրիվ բացված վիճակում:

Թիակի արտաքին զույգի լողաթևերի հիմքերը քառանկյուն են: Մեծանում է լողաթաթով լողալու արագությունը, 7 նկ.:

(51) 2021.01 (11) 615 (13) Y
C05D 9/00
C05F 11/00

(21) AM20200019Y (22) 19.02.2020

(72) Սերյոժա Երիցյան (AM), Գայանե Գասպարյան (AM), Լուսինե Երիցյան (AM), Գայանե Ավագյան (AM), Նունե Դարբինյան (AM), Թոմ Համմետ (US)

(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Համալիր օրգանահանքային պարարտանյութ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ օրգանահանքային համալիր պարարտանյութի ստացման եղանակին, և կարող է կիրառվել որպես այլընտրանքային ֆունգիցիդային միջոց՝ ցորենի և գարու քարամրիկների և փոշեմրիկների դեմ պայքարելու համար:

Պարարտանյութը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգված. %.
հանքային բաղադրամաս՝ 48.1-56.0, օրգանական բաղադրամաս՝ 4.0-6.9, ամինաթթուների խառնուրդ՝ 2.5-4.2, կոմպլեքսագոյացուցիչ՝ 1.8-3.0, մակրո- և միկրոտարրեր պարունակող միացությունների խառնուրդ՝ 24.6-29.8 և ջուր՝ մնացածը: Որպես հանքային բաղադրամաս այն ներառում է ՀՀ Սիսիանի տարածաշրջանի դիատոմիտաբեր ավազանի կենսածին դիատոմային ապար, որպես օրգանական բաղադրամաս՝ հումուսային թթուների և դրանց աղերի խառնուրդ:

Բարձրացվում է պարարտանյութի արդյունավետությունը:

(51) 2021.01 (11) 616 (13) Y
C05F 11/00
C12N 1/00

(21) AM20200093Y (22) 19.10.2020

(72) Տիգրան Ալաջաջյան (AM), Անդրանիկ Ալաջաջյան (AM), Հակոբ Սարգսյան (AM), Հովհաննես Սարգսյան (AM), Ռոզա Մադոյան (AM)
 (73) Տիգրան Ալաջաջյան, 0041, Երևան, Նոր Արեշ 2-րդ փողոց, տուն 25 (AM), Անդրանիկ Ալաջաջյան, 0041, Երևան, Նոր Արեշ 2-րդ փողոց, 25 տուն (AM), Հակոբ Սարգսյան, 0017, Երևան, Սարի Թաղ, 3-րդ փողոց, 6 տուն (AM), Հովհաննես Սարգսյան, 0017, Երևան, Սարի Թաղ, 3-րդ փողոց, 6 տուն (AM), Ռոզա Մադոյան, 0012, Երևան, Վաղարշյան 20/1, բն. 40 (AM)

(54) Էկոլոգիապես մաքուր կոմպլեքս կենսապարարտանյութի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մանրէաբանությանը և կիրառական կենսատեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ էկոլոգիապես մաքուր կոմպլեքս կենսապարարտանյութի ստացման եղանակին:

Ազարացված սննդամիջավայրի վրա աճեցնում են ազոտ ֆիքսող՝ Azotobacter ցեղին պատկանող մանրէներ, աճեցված մանրէներով կատարում են վերացանքս հեղուկ սննդամիջավայրի վրա, ապա կուլտիվացնում են դրանք, որից հետո ստացված հեղուկ կենսազանգվածը իմոբիլիզացնում ձևափոխված բնական ցեոլիթի վրա, ստացված կենսապարարտանյութը չորացնում են: Լրացուցիչ առանձին-առանձին աճեցնում են Bacillus ցեղին և Pseudomonas ցեղին պատկանող մանրէներ, մանրէների աճեցման համար որպես սննդամիջավայր օգտագործում են պինդ մսապեպտոնային ազարացված սննդամիջավայրեր, մանրէների աճեցումը կատարում են 28-34°C ջերմաստիճանում 22-24 ժամվա ընթացքում, իսկ մանրէների վերացանքսի կուլտիվացումը կատարում են հեղուկ մսապեպտոնային սննդամիջավայրերի վրա 28-34°C ջերմաստիճանում 44-72 ժամվա ընթացքում, ընդ որում, վերը նշված յուրաքանչյուր գործողությունը համապատասխան ցեղին պատկանող մանրէների համար կատարում են առանձին-առանձին, իսկ համապատասխան մանրէներից ստացված չոր կենսապարարտանյութերը խառնում են իրար 1:(0,5-1,2):1,0-2,0) զանգվածային հարաբերակցությամբ:

Բարելավվում է հողի որակը և բարձրացվում բերքատվությունը:

**(51) 2021.01 (11) 617 (13) Y
C07H 21/00**

(21) AM20200044Y (22) 22.05.2020

(72) Արմեն Աղաջանյան (AM), Արթուր Համբարձումյան (AM), Գայանե Հովհաննիսյան (AM), Կարինե Եղյան (AM), Ավետիս Ծատուրյան (AM), Աշոտ Սաղյան (AM)

(73) «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ, 0056, Երևան, Գյուրջյան 14 (AM)

(54) Նատրիումի նուկլեինատի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ նատրիումի նուկլեինատի ստացման եղանակին, որը կարող է կիրառվել անասնապահության բնագավառում:

Խմորասնկերի կենսազանգվածը մշակում են աղաջրով, որից հետո կենսազանգվածից հիմքի ջրային լուծույթով էքստրակտում են նատրիումի նուկլեինատ, կենսազանգվածն անջատում են էքստրակտից, ապա վերնստվածքային հեղուկից հանքային թթվով կալցիումի աղերի առկայությամբ նստեցնում են ռիբոնուկլեինաթթու (ՌՆԹ), նստվածքը լվանում են, փոխարկում նատրիումի նուկլեինատի և չորացնում: Էքստրակտումը կատարում են pH-ի 9,4-9,6 արժեքում, իսկ նատրիումի նուկլեինատը չորացնում են լիոֆիլիզացման միջոցով:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը և պարզեցվում նատրիումի նուկլեինատի ստացման եղանակը:

**(51) 2021.01 (11) 618 (13) Y
C07K 3/00**

(21) AM20210030Y (22) 20.04.2021

(72) Մաքսիմ Սիմոնյան (AM), Ռուզան Սիմոնյան (AM)
 (73) Մաքսիմ Սիմոնյան, 0015, Երևան, Եզնիկ Կողբացու 1ա, բն. 3 (AM), Ռուզան Սիմոնյան, 0026, Երևան, Լազոյի 6, բն. 54 (AM)

(54) Կենսաթաղանթներից ու կենսահեղուկներից սուպերօքսիդ գեներացնող ջերմակայուն համակարգերի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսաքիմիայի բնագավառին, մասնավորապես՝ կենսահամակարգերից սուպերօքսիդ գեներացնող ջերմակայուն համակարգերի ստացման եղանակներին և կարող է կիրառվել բժշկության մեջ և այլ բնագավառներում:

Կենսահամակարգերից անջատում են բջիջների, կորիզների ու միտոքոնդրիումների թաղանթները, այնուհետև անջատված թաղանթները հոմոգենացնում են ջրում՝ 5,10-5 Մ հեմոգլոբինի առկայությամբ՝ ավելացնելով 0,1 Մ KOH մինչև pH-ի 9,5 արժեք, ստացված խառնուրդներն ինկուբացնում են 1,5 ժամվա ընթացքում 37°C ջերմաստիճանում, որից հետո խառնուրդները ցենտրիֆուգում են, վերնստվածքային հեղուկներն առանձնացնում են և ավելացնում 0,1 Մ աղաթթու՝ մինչև pH-ի 4,8 արժեք, ապա առաջացած նստվածքը ցենտրիֆուգում են և նորից հոմոգենացնում են ջրում՝ pH-ի 9,5 արժեքի դեպքում: Որպես կենսահամակարգեր վերցնում են բուսական և կենդանական ծագման բաղադրիչներ, իսկ սուպերօքսիդ գեներացնող ՆԼՊ-Nox ասոցիատի, ՆՍՊ-Fe(III) կոմպլեքսի իզոմերի և ՆՍԲի-ի (Nox) իզոմերն անջատելու համար վերնստվածքային հեղուկներն անցկացնում են DE-52 ցելյուլոզայով լցված իոնափոխանակային քրոմատագրման ապակյա աշտարակով, ապա գել-ֆիլտրմամբ G-100 սեֆադեքսով լցված աշտարակով՝ pH-ի 9,5 արժեքում: Ընդ որում որպես բուսական ծագման բաղադրիչներ վերցնում են դեղաբույսերի (Stevia, ավելուկ, կոճապղպեղ, մատուռակ), բուսական ծագման մթերքի՝ մրգերի (ծիրան, խաղող, դրա կորիզներ, արքայամորի, խնձոր, տանձ, թուզ), բոստանային կուլտուրաների (գազար, սեխ, ձմերուկ, կերակրի սնկերի, ցորենի ու եգիպտացորենի այլուր), իսկ որպես կենդանական ծագման մթերքի՝ (կովի կաթ, հավի ձու, ձկան խավիար) թաղանթային և հեղուկաֆազ կազմավորումներ:

Պարզեցվում է եղանակը:

(51) 2021.01 (11) 619 (13) Y
C08L 61/00
C08K 13/00

(21) AM20210034Y (22) 05.05.2021

(72) Սարքիս Դերքալուսյան (AM)
(73) Սարքիս Դերքալուսյան, 0037, Երևան, Արաբկիր 35 փողոց, տուն 2/1 (AM)

(54) Շփական բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է շփական նշանակության պոլիմերային բաղադրանյութերին և կարող է կիրառվել ավտոմեքենաների արգելակային կոճղակների պատրաստման համար և շփական մակերեսների համար, ինչպես նաև գյուտը վերաբերում է էկոլոգիապես մաքուր շփական բաղադրանյութերի բաղադրակազմին՝ ջրային հիմքով ոչ թունավոր բնական պոլիմերային կապակցող նյութով, առանց մետաղների և մետաղական կամ ոչ մետաղական հիմքով քիմիական միացությունների:

Շփական բաղադրանյութը ներառում է ջերմառեակտիվ կապակցանյութեր՝ կաուչուկ, անօրգանական լցանյութեր և շփման ու մաշման կարգավորիչ: Այն լրացուցիչ ներառում է 2:1:2 հարաբերակցությամբ վերցված գրաֆիտի, ծիրանի կորիզի կեղևի փոշիների և քարածխային խեժի խառնուրդ, 3:1 հարաբերակցությամբ վերցված 0,05-0,3 մմ չափի մանրացված փքեցրած պեռլիտի և սոճու խտանյութի յուղի խառնուրդ, որպես ջերմառեակտիվ կապակցանյութ ներառում է 9:1 հարաբերակցությամբ վերցված բնական կաուչուկի և ծծումբի խառնուրդ, անօրգանական լցանյութ՝ 0,05-0,3 մմ չափի մանրացված տուֆ քար, ջրազրկված մարմար քարի փոշի, շփման ու մաշման կարգավորիչ՝ 0,05-0,3 մմ չափի մանրացված բազալտ քար, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ.%. 2:1:2 հարաբերակցությամբ վերցված գրաֆիտի, ծիրանի կորիզի կեղևի փոշիների և քարածխային խեժի խառնուրդ՝ 8,0-12,0 3:1 հարաբերակցությամբ վերցված՝ 0,05-0,3 մմ չափի մանրացված փքեցրած պեռլիտի և սոճու խտանյութի յուղի խառնուրդ՝ 5,0-11,0 9:1 հարաբերակցությամբ վերցված բնական կաուչուկի և ծծումբի խառնուրդ՝ 15,0-20,0, 0,05-0,3 մմ չափի մանրացված տուֆ քար՝ 10,0-12,0, 0,05-0,3 մմ չափի մանրացված բազալտ

քար՝ 25,0-30,0, ջրագրկված մարմար քարի փոշի՝ մնացածը:

Ապահովվում է ավտոմեքենաների արգելակային կոճղակների բարձր մաշակայունություն և շփման գործակցի կայունություն, միաժամանակ ընդլայնվում է շփական բաղադրանյութով պատրաստված իրերի և շփական մակերեսների արտադրանքի տեսականին, որոնք էկոլոգիապես մաքուր են:

**(51) 2021.01 (11) 620 (13) Y
E02B 13/00**

(21) AM20200031Y (22) 18.03.2020

(72) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան (AM)
(73) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան, 3115, Գյումրի, Տիմիրյազևի 32 (AM)

(54) Ջրանցքներում ջրի ելքի չափման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ջրանցքներում և գետերում ջրի ելքի չափմանը, և կարող է օգտագործվել ջրային տնտեսությունում ջրի հաշվառման համար:

Ջրանցքներում ջրի ելքի չափման եղանակը, որը ներառում է ջրանցքի ափին տեղակայված հորան, նրա մեջ ուղղաձիգ շարժվող լողան, լողանի ուղղաձիգ շարժումը գրանցող սարք և ջրանցքը հորանին միացնող խողովակ: Ջրանցքով հոսող ջրի բարձրությունը որոշում են լողանի ուղղաձիգ շարժման բարձրությանը գումարելով ջրանցքում ջրի արագության քառակուսու և ազատ անկման արագացման քանորդը:

Բարձրացվում է ջրանցքներում և գետերում ջրի ելքի չափման ճշտությունը, 2 նկ.:

**(51) 2021.01 (11) 621 (13) Y
E02B 13/00**

(21) AM20200032Y (22) 23.03.2020

(72) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան (AM), Անահիտ Սերյոժայի Գասպարյան (AM), Արման Հայկազի Սիմոնյան (AM)

(73) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան, 3115, Գյումրի, Տիմիրյազևի 32 (AM)

(54) Ջրանցքներում ջրի ելքի չափման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է ջրանցքներում և գետերում ջրի ելքի չափմանը, և կարող է օգտագործվել ջրային տնտեսությունում ջրի հաշվառման համար:

Ջրանցքներում ջրի ելքի չափման համակարգն ունի ջրանցքի ափին տեղակայված և խողովակով ջրանցքին միակցված հորան, նրա մեջ ուղղաձիգ շարժվող լողան, որը առաձգական լարով միակցված է չափող և գրանցող սարքի թմբուկին: Ջրանցքը հորանին միակցող խողովակի վրա տեղակայված է ճնշման տատանումների կայունացուցիչ:

Բարձրացվում է ջրանցքով հոսող ջրի ելքի չափման ճշտությունը, 3 նկ.:

**(51) 2021.01 (11) 622 (13) Y
E21F 5/00**

(21) AM20200089Y (22) 02.10.2020

(72) Արտաշես Թադևոսյան (AM), Տաթևիկ Բաղդաս արյան (AM), Պատվական Ոսկանյան (AM)
(73) Արտաշես Թադևոսյան, 0062, Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգված 2, բն. 28 (AM), Տաթևիկ Բաղդաս արյան, 0012, Երևան, Ա. Խաչատրյան 15, բն. 22 (AM), Պատվական Ոսկանյան, 0019, Երևան, Բաղրամյան 26, բն. 16 (AM)

(54) Փոշոտ մակերևույթների ամրացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է շրջակա միջավայրի պաշտպանությանը, մասնավորապես՝ փոշոտ մակերևույթների ամրացման եղանակներին:

Փոշոտ մակերևույթը ծածկում են բարձրամոլեկուլային միացության քսաշերտով և նստվածքային ապարով. նախքան փոշոտ մակերևույթը բարձրամոլեկուլային միացության քսաշերտով ծածկելը՝ այն ծածկում են նստվածքային ապարով, այնուհետև մշակում են բարձրամոլեկուլային միացության քսաշերտով՝ 40%-ոց պոլիվինիլացետատի ջրային լուծույթով: Որպես նստվածքային ապար վերցնում են 10,0-15,0 մմ հատիկների չափերով մանրախճի չափամաս: Իսկ 40%-ոց պոլիվինիլացետատի ջրային լուծույթը վերցնում են փոշոտ մակերևույթի 1մ² հաշվարկով 7,0-8,0լ քանակությամբ:

Բարձրացվում է փոշոտ մակերևույթների ամրացման աստիճանը:

(51) 2021.01 (11) 623 (13) Y
F41F 3/00

(21) AM20200030Y (22) 12.03.2020

(72) Հովհաննես Պողոսի Թարվերդյան (AM)
(73) Հովհաննես Պողոսի Թարվերդյան, 0044, Երևան, Ավան, Դուրյան թաղ. 31, բն. 38 (AM)

(54) Հրետանու միջոցով փակ կրակային դիրքից չդիտարկվող անշարժ նշանակետի ուղղությամբ կրակի կառավարման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հրետանու կրակի կառավարմանը, և կարող է օգտագործվել փակ կրակային դիրքերից հակառակորդի չդիտարկվող շենք-շինությունների կամ տեխնիկական միջոցների, ինչպես նաև նախապես հայտնի դիրքերում կուտակված կենդանի ուժերի ոչնչացման համար:

Հրետանու միջոցով փակ կրակային դիրքից չդիտարկվող անշարժ նշանակետի ուղղությամբ կրակի կառավարման եղանակի համաձայն նախապես համակարգչային ծրագիր մուտքագրում են նշանակետի կոորդինատները, այնուհետև համապատասխան կառավարվող արկով կրակում են նշված կոորդինատներով նշանառությամբ, որից հետո կատարում են նշանառության ճշգրտում, այնուհետև կրակում են ճշգրտված նշանառությամբ: Նշանառության ճշգրտումն իրականացնում են առաջին արկի պայթյունից հետո: Արբանյակային կապով արկի թռիչքի հետագծին հետևելով որոշում են արկի անկման կետի կոորդինատները, դրանք համադրում են նշանակետի՝ նախապես համակարգչային ծրագիր մուտքագրված կոորդինատների հետ, ապա համակարգչային ծրագրի օգնությամբ կատարում են նշանառության ճշգրտում:

Բարձրացվում է նշանակետերի խոցման ճշգրտությունը և արդյունավետությունը, 2 նկ.:

(51) 2021.01 (11) 624 (13) Y
G02B 23/00

(21) AM20200043Y (22) 21.05.2020

(72) Հովհաննես Մարգարյան Մկրտիչի (AM), Մկրտիչ Մարգարյան Հովհաննեսի (AM), Սոնա Մարգարյան Հովհաննեսի (AM)
(73) Հովհաննես Մարգարյան, 0040, Երևան, Ավան, Աճառյան 22բ, բն. 67 (AM)

(54) Հեղուկ հայելիով աստղադիտակ

(57) Գյուտը վերաբերում է հեղուկ հայելիով աստղադիտակներին:

Հեղուկ հայելիով աստղադիտակն ունի հենահարթակ և դրան անշարժ միակցված ուղղաձիգ ձող: Ուղղաձիգ ձողին հորիզոնական դիրքով, շարժական կապով միակցված է սկավառակ՝ իրեն ձողի շուրջ պտտող մեխանիզմով: Աստղադիտակն ունի անդրադարձնող հեղուկով թասերի բազմություն, որոնք թեք տեղակայված են սկավառակի վրա շրջանաձև հաջորդականությամբ և ուղղված են դեպի ուղղաձիգ ձողը: Անդրադարձնող հեղուկով թասերի տնիները կատարված են սնամեջ: Աստղադիտակն ունի նաև ուղղաձիգ ամրակալանի միջոցով սկավառակին ամրացված ծորակով բաք՝ ուղղաձիգ առանցքով շարժի հնարավորությամբ: Թասերի սնամեջ տնիներին և բաքի ծորակին շարժական կապերով միակցված է օղակաձև խողովակ: Աստղադիտակը լրացուցիչ ունի ուղղաձիգ ձողին շարժական կապով միակցված օղակաձև ամրակալան՝ ուղղաձիգ առանցքով շարժի հնարավորությամբ և օղակաձև ամրակալանին շրջանաձև հաջորդականությամբ ամրացված տարբեր նշանակության տեսախցիկներ՝ ինքնավար շարժաբերներով:

Մեծացվում է աստղադիտակի կիրառելիության տիրույթը, 1 նկ.:

(51) 2021.01 (11) 625 (13) Y
H01L 31/00

(21) AM20210024Y (22) 01.04.2021

(72) Սերգեյ Գավրիլի Խալպախյան (AM)
(73) Սերգեյ Գավրիլի Խալպախյան, 0069, Երևան, Ռուբինյանց 1ա, բն. 73 (AM)

(54) Օպտիկական բևեռաչափ

(57) Օպտիկական բևեռաչափն ունի հաջորդաբար տեղակայված կիզակետող և զտող հանգույցներ, բևեռացուցիչի տեսքով իրականացված կոնվերտեր, օպտոէլեկտրոնային կերպափոխիչ, որին միացված է էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման հանգույց, ու կոնվերտերը պտտող սարք: Կոնվերտերն ունի նաև լրացուցիչ նույնական բևեռացուցիչ, որը կոշտ

տեղակայված է այնպես, որ բևեռացուցիչների հարթ մակերևույթներին ուղղահայաց ընկնող հարթ բևեռացված ճառագայթման նկատմամբ բևեռացուցիչների առավելագույն զգայունության ուղղությունները կազմեն ուղիղ անկյուն: Բևեռաչափն ունի նաև լրացուցիչ բևեռացուցիչի միջոցով ներգործվող լրացուցիչ օպտոէլեկտրոնային կերպափոխիչ ու դրան միացված էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման լրացուցիչ հանգույց:

Ընդլայնվում են բևեռաչափի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում են չափումների ճշգրտությունը և օգտագործման հարմարավետությունը, 2 նկ.:

(51) 2021.01 (11) 626 (13) Y
H01L 31/00

(21) AM20210025Y (22) 01.04.2021

(72) Սերգեյ Գավրիլի Խալախսյան (AM)

(73) Սերգեյ Գավրիլի Խալախսյան, 0069, Երևան, Ռուբինյանց 1ա, բն. 73 (AM)

(54) Օպտիկական բևեռաչափ

(57) Օպտիկական բևեռաչափն ունի հաջորդաբար տեղակայված կիզակետող և գտող հանգույցներ, բևեռացուցիչի տեսքով իրականացված կոնվերտեր, օպտոէլեկտրոնային կերպափոխիչ, որին միացված է էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման հանգույց, և ճառագայթը ձևափոխող հանգույցը պատող սարք: Կոնվերտերն ունի նաև նույնախիսի երկրորդ և երրորդ բևեռացուցիչներ, որոնք կոշտ տեղակայված են այնպես, որ բևեռացուցիչների հարթ մակերևույթներին ուղղահայաց ընկնող հարթ բևեռացված ճառագայթման նկատմամբ առաջին և երկրորդ բևեռացուցիչների առավելագույն զգայունության ուղղությունները կազմեն ուղիղ անկյուն, իսկ երրորդ բևեռացուցիչի առավելագույն զգայունության ուղղությունը կիսի այդ ուղիղ անկյունը: Երկրորդ և երրորդ բևեռացուցիչներն ունեն իրենց օպտոէլեկտրոնային կերպափոխիչները, որոնց միացված են էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման հանգույցներ: Երրորդ բևեռացուցիչի էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման հանգույցի ելքը

միացված է բևեռացուցիչների մակերևույթներին ուղղահայաց առանցքի շուրջ կոնվերտերը պատող սարքի մուտքին:

Ընդլայնվում են բևեռաչափի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 2 նկ.:

(51) 2021.01 (11) 627 (13) Y

H01Q 3/00

(21) AM20200009Y

(22) 31.01.2020

(72) Արթուր Եղիշի Մարտիրոսյան (AM), Ռադիկ Բենիկի Կոստանյան (AM), Պավել Հրաչյայի Մուժիկյան (AM), Հրայր Հրանտի Ազիբեկյան (AM)

(73) Արթուր Եղիշի Մարտիրոսյան, 0012, Երևան, Գր. Արծրունի փ.28, բն. 33 (AM), Ռադիկ Բենիկի Կոստանյան, 0009, Երևան, Խորենացի փ.3, բն. 9 (AM), Պավել Հրաչյայի Մուժիկյան, 0037, Երևան, Ա. Տիգրանյան փ.53, բն.1 (AM), Հրայր Հրանտի Ազիբեկյան, 0052, փ. Քանաքեռ շրջանցիկ թունել, տ.110 (AM)

(54) Օբյեկտի ռադիոտեղորոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրամագնիսական ալիքների օգնությամբ տարածության մեջ օբյեկտների հայտնաբերմանը և վերահսկմանը:

Ըստ օբյեկտի ռադիոտեղորոշման եղանակի էլեկտրամագնիսական ալիքները ընդունում են երկչափ՝ հորիզոնական և ուղղահայաց դաս ավորությամբ ալեհավաքային տարրեր պարունակող ռադիոտեղորոշիչ համակարգի միջոցով: Գրանցում են մոնիտորինգի տակ գտնվող տարածության մարմնային անկյունից եկող ալիքների հզորության բաշխումը՝ տարածմանը ուղղահայաց հատույթում, և հայտնաբերում են ու հետևում այնտեղ գտնվող օբյեկտներին: Ալիքների գրանցումը կատարում են երկու կանալով:

Հորիզոնական ուղղությամբ օբյեկտի ռադիոտեղորոշման համար օգտագործում են հորիզոնական ցիլինդրիկ ոսպնյակ: Ֆոկալ հարթության մեջ գտնվող գրանցող ընդունիչները տեղադրում են հորիզոնական շարքի վրա: Ալիքների ուժեղացման

գործակիցը հորիզոնական ուղղությամբ չափում են անմիջականորեն և այն դեպքում, երբ այն ընկնելու տեղից կախված փոխվում է քառակուսային ֆունկցիայով, իսկ օբյեկտի տեղը հորիզոնական ուղղությամբ ալիքների տարածմանը ուղղահայաց հատույթում որոշում են համապատասխան բանաձևով:

Ուղղաձիգ ուղղությամբ օբյեկտի ռադիոտեղորոշման համար օգտագործում են ուղղաձիգ ցիլինդրիկ ուսանյակ: Ֆոկալ հարթության մեջ գտնվող գրանցող ընդունիչ-

ները տեղադրում են ուղղաձիգ շարքի վրա: Ալիքների ուժեղացման գործակիցը ուղղաձիգ ուղղությամբ չափում են անմիջականորեն և այն դեպքում, երբ այն ընկնելու տեղից կախված փոխվում է քառակուսային ֆունկցիայով: Օբյեկտի տեղը ուղղաձիգ ուղղությամբ ալիքների տարածմանը ուղղահայաց հատույթում որոշում են համապատասխան բանաձևով:

Կերպափոխվում է ալիքների հզորության բաշխումը ըստ տարածմանը ուղղահայաց հատույթի, 4 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20171261 (111) 32928
(220) 01.09.2017 (151) 15.07.2021
(181) 01.09.2027
(730) Ստյոպա Սամվելի Ծառուկյան, ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Բաբաջանյան 3/1, AM (442) 15.09.2017 (540)



(511) դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) 20192068 (111) 32929
(220) 11.10.2019 (151) 15.07.2021
(181) 11.10.2029
(730) Տիգրան Մկրտչյան, Երևան, Առնո Բաբաջանյան 113, բն. 25, AM (442) 16.12.2019 (540)



(511) դաս 3. ոչ բուժական կոսմետիկական միջոցներ և արդուզարդի պատրաստուկներ. ոչ բուժական ատամի փոշիներ և մածուկներ. օծանելիք, եթերային յուղեր. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման, ճարպազերծման և հղկամշակման համար.

դաս 5. դեղագործական արտադրանք, բժշկական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, մանկական սնունդ. կենսաակտիվ սննդային հավելումներ մարդու կամ կենդանիների համար. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 9. գիտական, հետազոտական, նավագնացական, եկրաբաշխական, լուսանկարչական, կինոնկարահանման, տեսալսողական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հայտնաբերման, փորձարկման, զննման, փրկարարական և ուսուցման սարքեր և գործիքներ. էլեկտրականության բաշխման կամ սպառման կարգավորման կամ վերահսկման, հաղորդման, միացման, փոխակերպման, կուտակման սարքեր և գործիքներ. ձայնի, պատկերի կամ տեղեկատվության գրառման, հաղորդման, վերարտադրման կամ մշակման սարքեր և գործիքներ. գրառված և ներբեռնվող տեղեկակիրներ, համակարգչային ծրագրային ապահովում, թվային կամ անալոգային տեղեկատվության գրառման և պահպանման դատարկ տեղեկակիրներ. կանխավճարով աշխատող ապարատների մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ, հաշվիչ սարքեր. համակարգիչներ և համակարգիչներին կից սարքեր. սուզագետստներ, ջրասուզակների դիմապանակներ, ականջախցաններ, քթասեղմիչներ ջրասուզակների և լողորդների համար,

ջրասուզակների ձեռնոցներ, շնչառական ապարատներ ստորջրյա լողի համար. կրակմարիչներ.

դաս 11. լուսավորման, ջեռուցման, հովացման, շոգու արտադրման, սննդամթերքի ջերմամշակման, սառեցման, չորացման, օդափոխման, ջրաբաշխման և սանիտարատեխնիկական սարքեր և տեղակայանքներ.

դաս 15. երաժշտական գործիքներ. նոտակալներ և երաժշտական գործիքների դրոցներ. չափ տալու ձողիկներ (խմբավարի).

դաս 16. թուղթ և սովարաթուղթ. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական և գրասենյակային պիտույքներ, բացառությամբ կահույքի. կաչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. նյութեր նկարչության համար և պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ. պլաստմասսայե թերթեր, ժապավեններ և տոպրակներ փաթեթավորման և կապոցավորման համար. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 28. խաղեր և խաղալիքներ. ապարատներ տեսախաղերի համար. մարմնամարզական և սպորտային իրեր. տոնաձառի զարդեր.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 38. հեռահաղորդակցություն.

դաս 39. տրանսպորտային փոխադրումներ. ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 41. կրթություն. ուսումնական գործընթացի ապահովում. զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և դրանց հետ կապված հետազոտություններ և մշակումներ. արդյունաբերական վերլուծումների և արդյունաբերական հետազոտությունների ծառայություններ. համակարգչային ապարատների և ծրագրային ապահովման մշակում և զարգացում:

(210) 20200880
(220) 18.05.2020

(111) 32930
(151) 15.07.2021
(181) 18.05.2030

(730) «Պարկ Լոպ» ՍՊԸ, ք. Ծաղկաձոր, Կ. Անդրեասի 6, AM

(442) 01.07.2020
(540)



(526) «TOBOGGAN» և «TSAGHKADZOR» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր (C:0 M100 Y:100 K:0), շագանակագույն (C:0 M:20 Y:100 K:50) և դեղին (C:11 M:38 Y:100 K:0) գունային համակցությամբ:

(511)

դաս 13. հրավառելիք.

դաս 16. թուղթ և սովարաթուղթ. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական և գրասենյակային պիտույքներ, բացառությամբ կահույքի. կաչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. նյութեր նկարչության համար և պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ. պլաստմասսայե թերթեր, ժապավեններ և տոպրակներ փաթեթավորման և կապոցավորման համար. տառաշարեր. տպագրական կլիշեներ. թուղթ կտրելու դանակներ և գործիքներ. թղթյա իրերը ամրացնելու և պահելու համար պատյաններ և հարմարանքներ, այն է՝ արագակարներ, թղթապանակներ, թղթադրամների սեղմիչներ, վճարագրերի գրքույկների բռնիչներ, թղթի ամրակներ, անձնագրերի կազմեր, ալբոմներ. գրասենյակային մեքենաներ, այն է՝ գրամեքենաներ, կրկնակիչներ, գրասենյակային մակնշման մեքենաներ, մատիտ սրելու հարմարանքներ. նկարիչների և դիզայներների համար նկարելու համար իրեր, այն է՝ նկարիչների համար ջրաներկ բացելու բաժակապնակներ, նկարակալներ, ներկապնակներ, ներկարարական գլանիկներ,

ներկերի արկղեր. թղթե միանգամյա իրեր, այն է՝ մանկական թղթե կրծկալներ, թղթե թաշկինակներ, սեղանի թղթե սպիտակեղեն. թղթից և ստվարաթղթից իրեր, այն է՝ թղթե տոպրակներ, ծրարներ, տարողություններ, թղթե և ստվարաթղթե արձաններ, պատկերներ, արվեստի գործերը փաթեթավորելու թուղթ. պապիեմաշեից արձանիկներ. շրջանակված կամ չշրջանակված վիմատիպ նկարներ. նկարներ. ջրաներկեր.

դաս 18. ուղեպայուսակներ, երեխաներ կրելու համար ուսափոկերով համակներ, դպրոցական պայուսակներ.

դաս 25. սպորտային հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ.

դաս 28. խաղեր և խաղալիքներ, այն է՝ սեղանի մանկական խաղեր՝ թեքուղիներ.

դաս 32. գարեջուր. ոչ ալկոհոլային ըմպելիքներ. հանքային և գազավորված ջրեր. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր. ոչ ալկոհոլային ըմպելիքներ. զովացուցիչ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. բրնձի և սոյայի հիմքով ըմպելիքներ, բացի կաթի փոխարինիչներից. էներգետիկ ըմպելիքներ. իզոտոնիկ ըմպելիքներ. պրոտեինով հարստացված սպորտային ըմպելիքներ. ոչ ալկոհոլային բնահյութեր և մրգային լուծամզուքներ ըմպելիքներ պատրաստելու համար.

դաս 33. ալկոհոլային խմիչքներ, բացառությամբ գարեջրի. ալկոհոլային բաղադրություններ ըմպելիքներ պատրաստելու համար. գինիներ, լիկյորային գինիներ. ալկոհոլային սիդրեր. տանձօղի. լիկյորներ. սպիրտային ըմպելիքներ. սպիրտային բնահյութեր (էսենցիաներ). ալկոհոլային մրգային լուծամզուքներ (էքստրակտներ). դառը թրմօղիներ.

դաս 41. գվարճանքի (ատրակցիոնների) զրոսայգիների ծառայություններ, այն է՝ տորգանի հետ կապված ծառայություններ.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) 20201076
(220) 12.06.2020

(111) 32931
(151) 15.07.2021
(181) 12.06.2030

(730) «Պրիմո ֆարմ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, գ.Աղինջ, Պ.Սևակի թաղ., փ. 17, թիվ 49/2, AM
(442) 16.07.2020
(540)



(526) «pharm» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կանաչ, կապույտ և դեղին գունային համակցությամբ:
(511)

դաս 35. դեղատների կողմից մատուցվող մանրամեծածախ առևտրի ծառայություններ. դեղորայքի մանրամեծածախ առք և վաճառք:

(740) Անդրանիկ Խաչիկյան

(210) 20201124
(220) 18.06.2020

(111) 32932
(151) 15.07.2021
(181) 18.06.2030

(730) Արթուր Առուստամյան, Երևան, Տերյան 8, բն. 55, AM

(442) 01.07.2020
(540)

Bonamicin Бонамицин

(511)

դաս 5. սննդային հավելումներ. կենսաբանորեն ակտիվ հավելումներ. դիետիկ հավելումներ:

(210) 20201161 (111) 32933
 (220) 24.06.2020 (151) 15.07.2021
 (181) 24.06.2030
 (730) «Բարի Սամարացին» ՍՊԸ, Երևան, Նոր-Արեշ 22-րդ փող., 117/7, AM
 (442) 16.07.2020
 (540)



(526) «ՄՍԱՄԹԵՐՔ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:
 (511)
 դաս 29. երջիկեղեն:

(210) 20201508 (111) 32934
 (220) 11.08.2020 (151) 15.07.2021
 (181) 11.08.2030
 (730) «Իոսատ» ՍՊԸ, Երևան, Նար-Դոս 1-ին նրբ., տ. 65, AM
 (442) 16.10.2020
 (540)



(526) «RESTAURANT» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:
 (591) Ապրանքային նշանը պահպանվում է շագանակագույն, դարչնագույն, մուգ և բաց կարմիր, սպիտակ և բաց դեղին գունային համակցությամբ:
 (511)
 դաս 43. ռեստորանների ծառայություններ:

(210) 20201526 (111) 32935
 (220) 12.08.2020 (151) 15.07.2021
 (181) 12.08.2030
 (730) «Լիդ Մեջ» ՍՊԸ, Երևան, Ալմա-Աթա 4, AM
 (442) 01.09.2020
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց կապույտ և դեղին գունային համակցությամբ:
 (511)
 դաս 35. ջեռուցման և օդափոխման համակարգերի մանրաձախ և մեծաձախ առևտրի ծառայություններ:

(210) 20201652 (111) 32936
 (220) 27.08.2020 (151) 15.07.2021
 (181) 27.08.2030
 (730) «Մեգա շին» ՍՊԸ, Երևան, Հաղթանակ թաղ. 1-ին փող., Հ 44/4, AM
 (442) 01.12.2020
 (540)

MEGA SHIN

(526) «SHIN» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:
 (511)
 դաս 6. մետաղական շինարարական ապրանքներ և նյութեր.
 դաս 19. ոչ մետաղական շինանյութ. բետոն. շինարարական տարրեր.
 դաս 35. շինարարական ապրանքների և նյութերի մանրաձախ և մեծաձախ առևտուր.
 դաս 37. շինարարական և նորոգման ծառայություններ:

(210) 20201653 (111) 32937
 (220) 27.08.2020 (151) 15.07.2021
 (181) 27.08.2030

(730) «Մեգա շին» ՍՊԸ, Երևան, Հաղթանակ թաղ. 1-ին փող., Հ 44/4, AM
(442) 01.12.2020
(540)

ՄԵԳԱ ՇԻՆ

(526) «ՇԻՆ» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 6. մետաղական շինարարական ապրանքներ և նյութեր.

դաս 19. ոչ մետաղական շինանյութ. բետոն. շինարարական տարրեր.

դաս 35. շինարարական ապրանքների և նյութերի մանրածախ և մեծածախ առևտուր. վաճառք.

դաս 37. շինարարական և նորոգման ծառայություններ:

(210) 20201663 (111) 32938
(220) 31.08.2020 (151) 15.07.2021
(181) 31.08.2030

(730) «Մինի բասկոնիա» ՍՊԸ, Երևան, Արշակունյաց պող., շ. 15, AM
(442) 16.09.2020
(540)

Թզուկ Խոհարար Гном Поваренок Gnome Cook

(511)
դաս 5. հակասաթմատիկ թեյերի փունջ. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, մանկական սնունդ. կենսասակտիվ սննդային հավելումներ մարդու կամ կենդանիների համար. թեյեր բուժական նպատակների համար.

դաս 29. սննդային սպիտակուցներ. ջրի-մուռների սննդային լուծամզուքներ (էքստ-

րակտներ). անկենդան անձրուկներ (անչոուս). գետնընկույզի յուղ. կարագ. կոկոսի յուղ (կարագ). սերուցքային կրեմ. արյունախառն երշիկ. բաղադրություններ արգանակ պատրաստելու համար. խավիար. երշիկեղեն. կարտոֆիլի չիպսեր. չորացրած կոկոսի ընկույզներ. արգանակի խտածոներ. պանիրներ. կրոկետներ. անկենդան խեցգետնանմաններ. շոգանային մակարոններ. պտղամիս. ճարպանյութեր սննդային ճարպեր պատրաստելու համար. յուղային խառնուրդներ բուտերբրոդների համար. անկենդան ծովատառեխ. անկենդան օմարներ. անկենդան ոստրեներ. ձկան սննդային սոսիսձ. խոզապուխտ. յոգուրտ. բանջարեղենի հյութեր սնունդ պատրաստելու համար. մսային լուծամզուքներ (էքստրակտներ). լանգուստներ (անկենդան). բեկոն. մարմելադ, բացի հրուշակեղենից. սննդային ոսկրածուծ. անկենդան խեցեմորթներ. անկենդան միդիաներ. մշակված ընկույզներ. լյարդի պաշտետներ. պեկտիններ խոհարարական նպատակների համար. նրբերշիկ. ենթամթերքներ. պահածոյացված գետնասնկեր. մրգակեղև. ալգինատներ խոհարարական նպատակների համար. ծեծած նուշ. մշակված գետնընկույզ. պահածոյացված սնկեր. կոկոսի յուղ. լյարդ. ձկան հիմքով սննդամթերք. մրգային չիպսեր. անկենդան խխունջներ. սպիրտի մեջ պահածոյացված մրգեր. սննդի համար պատրաստված ծաղկափոշի. անկենդան սղոցածև ծովամորեխներ. խխունջի ձվեր. տոֆու (սոյայի շոռ). ուտելի թռչնի բներ. ձկան պահածոներ. ձկան ալյուր սննդի մեջ օգտագործելու համար. մսի պահածոներ. կարտոֆիլի բլիթներ. անկենդան հոլոտուրիներ (ծովային վարունգ). սննդի մեջ օգտագործվող շերամի որդի թիթեռների հարսնյակներ. նրբերշիկ պաքսիմատի մեջ. կարտոֆիլի փաթիլներ. խնձորի խյուս. լոռամրգի մրգանույշ. թահինի. հումուս. պահածոյացված ծովային ջրիմուռներ. կիմչի. սոյայի կաթ. կաթնային կոկտեյլներ. ձկան մուսեր. ոչ ալկոհոլային էգ-նոգ. բանջարեղենի մուսեր. ձկան մշակված խավիար. սննդի համար պատրաստված հալվե վերա. պրոտեինի բարձր պարունակությամբ կաթ. կտավատի սննդային յուղ. ցածր կալորիականությամբ կարտոֆիլի չիպսեր. լեցիտին խոհարարական նպատակների համար. կաթնային ֆերմենտներ խոհարարական նպատակների համար. կոմպոտներ.

խտացրած կաթ. թթվասեր. դոմիկի խավիար. բադրիջանի խավիար. գետնընկույզի կաթ խոհարարական նպատակների համար. նշի կաթ խոհարարական նպատակների համար. բրնձի կաթ. պահածոյացված արտիճուկ. կաթի փոշի. յակիտորի. բուլգոգի. շաքարապատված ընկույզներ. բուրավետացրված ընկույզներ. մշակված պնդուկ. գուակամոլե. սոխի օղակներ. ֆալաֆել. կիտրոնի հյութ խոհարարական նպատակների համար. սառեցումով չորացրած միս. վարսակի կաթ. բանջարեղենային սերուցքներ. ուտելի մրջյունների թրթուրներ, պատրաստված. ուտելի անկենդան միջատներ. ընկույզի հիմքով հացին քսվող սնունդ. կարտոֆիլի հիմքով խմորագնդիկներ. նրբերշիկներ հոթ-դոգերի համար. խմորապատ նրբերշիկներ փայտիկների վրա (կորն-դոգեր). սոյայի ձեթ սննդի համար. կաթի փոխարինիչներ. նուշի կաթ. գետնընկույզի կաթ. կոկոսի կաթ. կոկոսի կաթ խոհարարական նպատակների համար. ըմպելիքներ կոկոսի կաթի հիմքով. բրնձի կաթ խոհարարական նպատակների համար. ըմպելիքներ նուշի կաթի հիմքով. ըմպելիքներ գետնընկույզի կաթի հիմքով. բնական կամ արհեստական թաղանթներ երշիկի համար. կլիպֆիսկ (աղը դրած և չորացրած ձողաձուկ). կաթնաշոռով ալրային փքաբլիթներ. մամլած մրգային խմոր. յուբա. սոյայի բլիթներ. տոֆուի բլիթներ. թաժին (մսով, ձկնով կամ բանջարեղենով պատրաստված կերակուր). տեմպե. սաստե. ռատատոյ. բադի կոնֆիներ. անդույետ. սպիտակ պուդինգ. կասուլե. շուկրուտ. քերած կարտոֆիլից յուղաբլիթներ. օմլետ. մսի խճողակով կաղամբով տոլմա. բանջարեղենային խտածոներ սնունդ պատրաստելու համար. մրգային խտածոներ սնունդ պատրաստելու համար. հացին քսվող սնունդ բանջարեղենի հիմքով. ագար-ագար խոհարարական նպատակների համար. անկենդան կակղամորթներ. քվարկ. չորացրած ուտելի ծաղիկներ. բյուրեղացված կոճապղպեղ. պահածոյացված կոճապղպեղ. թթու դրած կոճապղպեղ.

դաս 30. ջրիմուռներ (համեմունք). մակարոնեղեն. նշով խմոր. անխոնի սերմ. աստղաձև անխոն. հրուշակեղեն Նոր տարվա տոնածառերը զարդարելու համար. ոչ բուժիչ թուրմեր. սրճային բուրավետարարներ. անուշաբույր պատրաստուկներ սննդի համար. համեմունք.

աղ սննդամթերքը պահածոյացնելու համար. պաքսիմատ. թխվածքաբլիթ. ածիկային գալետներ. անանուխի կոնֆետներ. կոնֆետներ. վաֆլիներ. ամոքահունց բուլկիներ. կակաո. սուրճ. սուրճի հումք. սուրճի բուսական փոխարինիչներ. հրուշակեղեն քաղցր խմորից, առավելապես խորիզով. դարչին (ամոքանք). կապարի թուփ. կարամելներ (կոնֆետներ). կարրի (ամոքանք). հացահատիկային արտադրանք. ծամոն (մաստակ). եղերդ (սուրճի փոխարինիչ). թեյ. շոկոլադ. նշակարկանդակներ. մեխակ (ամոքանք). համեմունքներ. քաղցրավենիք. եգիպտացորենի փաթիլներ. ադիբուդի. կայունարարներ հարած սերուցքի համար. պաղպաղակ. նրբաբլիթներ. սննդային էսենցիա (բնահյութ), բացառությամբ եթերային էսենցիաների և եթերային յուղերի. կերակրի աղ. թանձրացիչներ սննդամթերքի համար. քրքում. բնական քաղցրացնող նյութեր. ամոքանք. քաղցրաբլիթներ. բուրավետ պղպեղ. սննդային ալյուր. բակլայի ալյուր. եգիպտացորենի ալյուր. մանանեխի փոշի. գարու ալյուր. սոյայի ալյուր. ցորենի ալյուր. ալյուրից պատրաստված ուտելիքներ. սննդային օսլա. խմորի մակարոններ. պոմադկաներ (հրուշակեղեն). պետիֆուրներ (հրուշակներ). շաքար. բուրավետարարներ հրուշակեղենի համար (բացառությամբ եթերային յուղերի). փոշի հրուշակեղենի համար. քաղցր ամոքահունց խմոր հրուշակեղենի համար. աղացած կոճապղպեղ. կապակցող նյութեր պաղպաղակի համար. բնական կամ արհեստական սառույց. սառույց սառեցման համար. գլյուկոզա խոհարարական նպատակների համար. սննդային սնձան (սպիտակուցային նյութ). սննդային ձավարներ. քացախ. կետչուպ (սոուս). կակաոյով և կաթով ըմպելիքներ. սուրճով և կաթով ըմպելիքներ. շոկոլադակաթնային ըմպելիքներ. մակարոններ. խմորիչներ. կապակցող նյութեր երշիկեղենի համար. մակարոն (թխվածք). մակարոններ. աղացած եգիպտացորեն. բոված եգիպտացորեն. հաց. ածիկաշաքար. մաթ. ոսկե օշարակ, կերամափի օշարակ. անանուխ (դաղձ) քաղցրավենիքի համար. մեղր. մաքրած գարի. մանանեխ. մշկընկույզ. լապշա (արիշտա). կուտապներ. գարեձավար. սենդվիչներ. պաստեղներ (հրուշակեղեն). խմորեղեն (ալրային հրուշակեղեն). չոր թխվածքաբլիթ. բուլկիներ. պատիճավոր պղպեղ (համեմունք). պիցաներ.

պղպեղ (տաքդեղ). կարտոֆիլի ալյուր. պուրիճ (քաղցրակուտապ). պրալինե. ռավիոլի. մատուտակի կոնֆետներ (հրուշակեղեն). բրինձ. զաֆրան (քրքում) (համեմունք). սագո. սոուսներ (համեմունքներ). նեխուրի աղ. սպիտակաձավար. սորբեթ (սառեցված աղանդեր). սպազետի. տապիոկա. տապիոկայի ալյուր. տարտեր (մրգա - բանջարեղենային կարկանդակներ). վանիլի բուրավետարարներ խոհարարական նպատակների համար. վանիլին (վանիլի փոխարինիչներ). վերմիշել. կուլեբյակա մսով (կերակուր). պաշտետով կարկանդակներ. տնային պայմաններում միսը փափկացնող մթերքներ. սննդային սառույց. պաղպաղակ պատրաստելու փոշի. հրուշակեղեն նշի հիմքով. հրուշակեղեն գետնընկույզի հիմքով. բուրավետարարներ սննդի համար, բացառությամբ եթերային յուղերի. բուրավետարարներ ըմպելիքների համար, բացառությամբ եթերային յուղերի. մանրացված վարսակ. մաքրված վարսակ. մթերք վարսակի հիմքով. վարսակի փաթիլներ. վարսակաձավար. մատուտակի ձողիկներ (հրուշակեղեն). գարեջրի քացախ. սուրճի հիմքով ըմպելիքներ. կակաոյի հիմքով ըմպելիքներ. շոկոլադի հիմքով ըմպելիքներ. սուրճի փոխարինիչներ. բյուրեղացված նաբաթ շաքար. փաթիլներ (հացահատիկային արտադրանք). չոու-չոու (համեմունք). կուսկուս. ածիկի լուծամզուք (էքստրակտ) սննդի համար. ածիկ սննդի մեջ օգտագործելու համար. ակնամոմ. ռելիշ (համեմունք). մեղվամոր կաթ. ծովի ջուր սնունդ պատրաստելու համար. սուշի. տոմատի սոուս. մայոնեզ. կրեկերներ. եփած կրեմ. մրգային դոնդող (հրուշակային). մյուսլի. բրնձային բլիթներ. սոյայի սոուս. սառեցրած յոգուրտ (սննդային սառույց). չատնի (համեմունք). գարնանային ռուլետ. տակոս. տորտիլաներ. սառույցով թեյ. թեյի հիմքով ըմպելիքներ. համեմունքներ աղցանների համար. թավալելու պաքսիմատ. թաբուլե. հալվա. քիշ. մսային թանձր ամոքանք. միս. սոյայի խյուս (համեմունք). հացահատիկների հիմքով թեթև նախաճաշեր. բրնձի հիմքով թեթև նախաճաշեր. եգիպտացորենի շիլա. եգիպտացորենի ձավար. հացաթխման փոշի. կերակրի սոդա (նատրիումի բիկարբոնատ սննդի համար). պահածոյացված բանջարանոցային խոտեր (համեմունքներ). արիշտայի (լապշայի) հիմքով

